



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱԿՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ


Հեռ. (0262) 6-12-09
№ 07-Ե._
29_01_2013թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Պրն. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Ծակքար համայնքի ավագանու 25.12.2012 թ. թիվ 8 որոշմամբ հաստատված համայնքի 2013 – 2016 թթ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը:

Ծակքարի համայնքի ղեկավար՝

Գ. Ավետիսյան



**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱԿՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՄԱՄԲ**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի ազգաբնակչությունը առ 1-ը հունվարի 2013 թ. կազմում է 2948 մարդ:

I. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- 1.Բյուջեի կատարումը 2012 թ.կազմել է 96.7 %
- 2.Կանխատեսվում է 2013 – 2016 թվականների համար 160.8 մլն. դրամ.
- 3.Ծախսման ուղղությունները 2013 – 2016 թվականներին.
 - ա) Նոր թաղամասերում խմելու ջրագծի կառուցում.
 - բ) Գյուղապետարանի ապարատի պահպանում.
 - գ) Մանկապարտեզի նորոգում.
 - դ) Խմելու ջրագծի ներքին ցանցի նորոգում.
 - ե) Մշակույթի տան նորոգում .
- 4.Խնդրել ՀՀ Կառավարությանը 2013 թվականին նախատեսված աշխատանքների կատարման համար, պետական բյուջեից համայնքին օգնել 50 մլն. դրամով:

II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

- 1.Սոցիալական անապահով ընտանիքների թիվը 2012 թ. կազմել է 195.
- 2.Կանխատեսվում է 2013 – 2016 թվականին 190 – 200 ընտանիք.
3. Սոցիալական անապահով ընտանիքներից օգնություն են ստացել / փարոս / համակարգից 155 ընտանիք , 2 ընտանիք վետերանների խորհրդից ստացել են օգնություն.
- 4.Բնակչությունից 10 ընտանիք տեղափոխվել է հանրապետությունից դուրս, իսկ նոր եկողներ չկան:

III. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գյուղում գործում է բուժ. ամբուլատորիա, որը տեղավորված է գյուղապետարանի վարչական շենքում և ապահովված է բուժ. աշխատողներով: Գյուղում անհրաժեշտ է կառուցել բուժ. ամբուլատորիա:

IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Գյուղում գործում է 1 միջնակարգ դպրոց 319 աշակերտական տեղով, որը շահագործման է հանձնվել 1971 թ. :
2. 2012- 2013 թթ. ըս. տարում ընդգրկված են 372 աշակերտ:
3. Առաջարկվում է դպրոցական շենքի ջեռուցման ցանցի վերանորոգում և նոր կառուցված կիսակառույց մասնաշենքի շինարարության ավարտ:

V. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Գյուղում գործում է մշակույթի տուն 300 տեղանոց դահլիճով, գործում է 1 գրադարան, հայկական ժողովրդական ինքնագործ խումբ, ասմունքի խումբ, ընթերցանարտի և արևելյան մարզաձևերի խմբեր:
2. Համայնքի տարածքում կա «Թուխ Մանուկ» , «Մատուռ» , «Սուրբ Ստեփանոս» եկեղեցի կառուցված 1854 թվականի , պահպանվել է 14 խաչքարեր: Վերականգնողական աշխատանքներ պետք է տարվեն գյուղի եկեղեցու շինությունները պահպանելու և այն գործող դարձնելու համար:
3. Խնդրել Սարգսեանին միջնորդել ՀՀ Կառավարությանը գյուղի մշակույթի տունը, որը շահագործման է հանձնվել 1982 թվականից կապիտալ նորոգում կատարելու:

VI. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

1. Գյուղում կառուցված են ջրամբարներ, տարվու է աշխատանք հակասանիտարական երևույթների դեմ.
2. Շրջակա միջավայրի պահպանության վիճակը բավարար է, վերջին տարիներին հիմնվել են տնկարքեր, այգիներ, ինչպես նաև դեկորատիվ ծառատեսակներ և թփեր:

VII. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՈՐՏ

1. Գյուղում կատարվել է սեփականաշնորհում, սեփականաշնորհումից օգտվել են 532 ծուխ, որոնց սեփականաշնորհվել է 343 հա. վարելահող և 100 հա. խոտհարք: Սեփականաշնորհումից հետո բոլոր գյուղացիական և գյուղացիական կուլեկտիվ տնտեսություններին տրվել է հողի սեփականության վկայական: Բացի վերը նշվածից համայնքի անդամները օգտագործում են 345 հա. արոտավայր, իսկ մնացած 60 հա. համայնքի պահուստային ֆոնդի վարելահողերից 27 հա. վարձակալությամբ տրված է գյուղի ազգաբնակչությանը , որը օգտագործում է նպատակային կարգով, հացահատիկի, կերարտադրության և այլն:

2. 2012 թ. դեկտեմբերի 30 – ի դրությամբ գյուղում կա 622 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, ինչպես նաև 3842 թև տարբեր տեսակի թռչուններ:
Կանխատեսվում է 2013 – 2016 թվականներին այն անկում կապրի, այն պատճառով որ անասնակերը չի բավարարելու, գո. անասնաբուժական ծառայությունը միջին մակարդակի է, հեկտարի միջին բերքատվությունը շատ ցածր է հողի թերսնման պատճառով:

VIII. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԳԱՆԱՊԱՐՅԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. 2009 թ. ասֆալտապատվել է գյուղի կենտրոնական ճանապարհը 24000 քմ. մակերեսով, <Ասիական> բանկի միջոցներով, գյուղի համայնքային ճանապարհը անմխիթար վիճակում է :
2. Խնդրել Մարզպետարանին միջնորդել ՀՀ Կառավարությանը Ծակքար – Ձորագյուղ միջ. համայնքային ճանապարհի վերանորոգումը որևէ միջազգային ծրագրում ընդգրկելու համար:

IX. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Անհրաժեշտ է կատարել վերականգնողական աշխատանքներ էլ. ցանցում և կառուցել ևս երկու էլ. ենթակայաններ և փոխել ոչ պիտանի էլ. հենասյունները:

X. ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համայնքը օգտվում է ՀՀ Պետ. հեռուստատեսության թողարկված հաղորդաշարից՝ ինչպես նաև Մարտունու (Ձանգակ) հեռուստաընկերությունից: Գյուղում չի գործում ռադիոկապը: Գյուղը ապահովված է թվային հեռախոսակապով:

XI. ՍԵՅՄՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Համայնքի սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով, ՀՀ Կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների համաձայն, հայտ ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ կազմելու վերաբերյալ, որի հիման վրա էլ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ համայնքի սեյսմիկ անվտանգությունը ապահովելու համար:

Ծակքարի համայնքի ղեկավար՝



Գ. Ավետիսյան

Աշխատակազմի քարտուղար՝

Ս. Խաչատրյան